ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ԱՌԱՋ



Ձեր ծնողներին խնդրե՛ք, որպեսզի ծանր սարքերը, և կահույքն ամրացնեն հատակին կամ պատերին:

ՀԻՇԵ՛Ք 112 և 911 հեռախոսահամարները



Ցանկացած արտակարգ իրավիճակի դեպքում (ներառյալ հրշեջ ծառայություն, շտապ օգնություն, ոստիկանություն կամ փրկարարական աշխատանքների կազմակերպում) դուք կարող եք զանգահարել 911 կամ 112 հեռախոսահամարներին:

ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐՈՎ ՊԱՅՈՒՍԱԿ



Երկրաշարժի ժամանակ ձեզ անհրաժեշտ կլինի **առաջին անհրաժեշտության իրերով պայուսակ**, ուստի ձեր ծնողներին խնդրե՛ք, որպեսզի նախապես պատրաստեն և բնակարանի ելքի մոտ պահեն այն: Պայուսակի մեջ պետք է լինեն՝ առաջին բուժօգնության դեղարկղիկ, կարևոր փաստաթղթեր կամ դրանց պատճենները, մարտկոցով ռադիոընդունիչ, գրպանի լապտեր, սուլիչ, խմելու ջուր, պահածոյացված սնունդ, տաք հագուստ, հիգիենայի պարագաներ և ձեր սիրելի խաղալիքներից որևէ մեկը: